ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀՌ – ՄԱԾՔԲ – 21/3
SU- 2021/01
տեխնիկական սպասարկման

ք. Երևան 08"01.2021թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ. Խումարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակմամբ՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրն, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեխնիկական բազա ռադիոհեռարձակում կազմակերպելու նպատակով սարքավորումների տեղակայման համար, ապահովում արտաքին էլեկտրասնուցում և սարքավորումների շուրջօրյա պահպանություն, այսուհետ՝ «Ծառայություն»:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է.

2.1.1. Մատուցված Ծառայության համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ բաժնում նախատեսված կարգով:

2.1.2. Ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց վճարել իր կողմից տեղակայված առանձնացված հաշվիչի ցուցմունքով՝ համապատասխան էներգամատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի այցելել իր սարքավորումների տեղակայման վայրը, հետևյալ կարգով.

2.2.1. վթարային իրավիճակներում վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար՝ ըստ անհրաժեշտության ցանկացած ժամի;

2.2.2. սարքավորումների արդիականացման, կապիտալ նորոգման կամ փոխարինման դեպքում՝ Կատարողի աշխատանքային ռեժիմի ժամանակահատվածում՝ 09.00-18.00 նախապես ներկայացրած գրավոր հայտի հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է.

2.3.1. Տեխնիկական միջոցների անսարքությունների դեպքում, կապի գործող միջոցներով օպերատիվ տեղեկացնել Պատվիրատուին: Տեխնիկական միջոցների վերանորոգման և վերազինման աշխատանքները իրականացնում է Պատվիրատուն: Անտենա-ֆիդերային համակարգի խափանումները վերացվում են Կատարողի ուժերով:

2.3.2. Վթարային իրավիճակը կանխելու համար դադարեցնել սարքավորումների աշխատանքը՝ անհապաղ ծանուցելով Պատվիրատուին;

2.4. Կատարողն իրավունք ունի.

2.4.1. Կայաններում կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) աշխատանքների իրականացման համար, Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի հիման վրա, դադարեցնել նրա տեխնիկական միջոցների աշխատանքը:

2.4.2. Դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Պատվիրատուն պարբերաբար խախտում է սույն պայմանագրի 2.1.1 կետը՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի 1-ին կետում նշված Ծառայության համար տարեկան պայմանագրային գին է սահմանվում 10080.0 հազար (տաս միլիոն ութսուն հազար) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրով մատուցվող Ծառայության համար ամսական պայմանագրային գին է սահմանվում 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն (Հավելված 1):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3.2.Վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, Կատարողի ներկայացրած հաշիվ-ապրանքագրի հիման վրա, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 30-ը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրի պարտավորությունների կատարումը; Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Սույն պայմանագրի դրույթները գործելու են 01.01.2021թ.ից:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2.Պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած ժամկետում կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ 1 (մեկ) ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

6.3.Կողմերն իրավունք չունեն Պայմանագրով սահմանված իրենց իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձանց՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

6.4.Կողմերը պայմանավորվեցին Պայմանագրի գործողության ընթացքում ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծել անմիջական բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում՝ վիճելի հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5.Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին երկշաբաթյա ժամկետում:

6.6.Պայմանագիրը և նրա հավելվածները պարունակում են գաղտնի տեղեկատվություն, որը չի կարող օգտագործվել կամ պատճենահանվել առանց Կողմերի համաձայնության:

6.7. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) իրավահամազոր օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի մոտ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
ք. Երևան,Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ	«Ամերիաբանկ»ՓԲԸ
ՀՀ 220553334321000	ՀՀ 1570027609970100
ՀՎՀՀ 01541435	ՀՎՀՀ 01601898
Պատվիրատուի կողմից	Կատարողի կողմից
_____ Գ. Խումարյան	_____ Մ. Ամիրխանյան

Հավելված 1

ՀԱՇՎԱՐԿ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից 2021թ. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին մատուցվող տեխնիկական սպասարկման ծառայության ամսական գնի

Տեխնիկական միջոցի անվանումը	քանակը (հատ)	հզորությունը (Վտ)	տեղակայման վայրը	հաճախականությունը	ընդհանուր գումարը ԱԱՀ-ով (դրամ)
Ռադիոհաղորդակ	1	2000	Երևան	107.7	380 000
Ռադիոհաղորդակ	1	1000	Երևան	91.1	200 000
Ռադիոհաղորդակ	1	500	Երևան	103.8	70 000
Ռադիոհաղորդակ	1	500	Երևան	69.7	70 000
Ռադիոհաղորդակ	1	500	Երևան	97,3	70 000
Ռադիոհաղորդակ	1	500	Գյումրի	101.6	50 000
Ընդամենը					***840 000***

Պատվիրատու

ք. Երևան,Ալեք Մանուկյան 5
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՀ 220553334321000
ՀՎՀՀ 01541435

Պատվիրատուի կողմից

_____ ***Գ. Խումարյան***

Կատարող

ք. Երևան, Նորք, Գ.Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Կատարողի կողմից

_____ ***Մ. Մելիքոնյան***